

1-58


Handwritten text on a small yellowish paper label, possibly "1-58" or similar.

ՀԱՅԿԱՆՏԵՍԱԿԱՆ

ԱՐՏԵՐ ՈՐԻՆԱԿԵՐ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Handwritten text in a cursive script, possibly a mix of English and another language, located at the top left of the page. The text is oriented diagonally and appears to be a title or a note related to the drawing below.





197  
60019

Пролетарии всех стран, соединяйтесь!

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

**ПРИМЕРНЫЙ УСТАВ  
СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЙ  
АРТЕЛИ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ  
ՈՐԻՆԱԿԵԼԻ**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Принятый вторым всесоюзным съездом колхозников ударников и утвержденный Советом Народных Комиссаров СССР и Центральным Комитетом ВКП(б) 17 февраля 1935 г.

Ընդունված հարվածային կոլսնեստականների Համամիութենական յերկրորդ համագումարի կողմից յեվ հաստատված ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ու ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի կողմից 1935 թվի փետրվարի 17-ին

Հանրապետության Կենտրոնական Կառավարություն


ՄԱՆԱԿԱՆԱԿԱՆ ԿՐԹԱՆՈՒՅՑՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


ԿՐԹԱՆՈՒՅՑՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կրթության նախարարության հրամանով 1927 թվականի 11-12 հունիսին Երևանում կատարված համաժողովի որոշումների հիմամբ 1927 թվականի 11-12 հունիսին Երևանում կատարված համաժողովի որոշումների հիմամբ 1927 թվականի 11-12 հունիսին Երևանում կատարված համաժողովի որոշումների հիմամբ



111-154494





# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ընդունված հարվածային կոլսնեստականների Համամիութենական յերկրորդ համագումարի կողմից յեղ հաստատված ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ու ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի կողմից 1935 թվի փետրվարի 17-ին

### 1

#### ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. . . . . շրջանի . . . . . գյուղի  
(ստանիցայի, խուտորի, ղըլաղի, աուլի) աշխատավոր գյուղացիները կամավոր կերպով միանում, կազմում են գյուղատնտեսական արտել, վորպեսզի արտագրություն ընդհանուր միջոցներով և կազմակերպված ընդհանուր աշխատանքով կառուցեն կոլեկտիվ, այսինքն՝ հանրալին տնտեսություն, ապահովեն լիակատար հաղթանակ կուլակի դեմ, բոլոր շահագործողների ու աշխատավորության թշնամիներին դեմ, ապահովեն լիակատար հաղթանակ կարիքի ու խավարի դեմ, մանր անհատական տնտեսության հետամնացության դեմ, ստեղծեն

աշխատանքի բարձր արտադրողականութիւնն և այսպիսով ապահովեն կոլտնտեսականների լավագուշն կյանքը:

Կոլտնտեսային ուղին, սոցիալիզմի ուղին, միակ ճիշտ ուղին և աշխատավոր գյուղացիների համար: Արտելի անդամները պարտավորվում են ամրացնել իրենց արտելը, աշխատել ազնվորեն, բաժանել կոլտնտեսային չեկանուտն ըստ աշխատանքի, պահպանել հանրային սեփականութիւնը, պահպանել կոլտնտեսային ունեցվածքը, պահպանել տրակտորներն ու մեքենաները, կազմակերպել ձիու լավ խնամքը, կատարել իրենց բանվորագյուղացիական պետութիւնն առաջադրանքները և այսպիսով դարձնել իրենց կոլտնտեսութիւնը բոլորեկիցան և բոլոր կոլտնտեսականներին՝ ունեւոր:

## 2

### ՀՈՂԻ ՄԱՍԻ

2. Վոչնչացվում են բոլոր միջնակները, վորոնք առաջ բաժանում ելին արտելի անդամների հողաբաժինները և բոլոր դաշտային հողաբաժինները վեր են ածվում միասնական հողային մասսիվի, վորը կոլեկտիվ կերպով ոգտագործում և արտելը:

Արտելի զբաղեցրած հողը (ինչպես և ամեն մի հող ԽՍՀՄ-ում) համաժողովրդական պետական սեփականութիւնն է: Այդ հողը բանվորագյուղացիական պետութիւնն որենքներով ամրացվում և արտելին՝ անժամկետ ոգտագործման համար, այսինքն՝ հավիտյան և չենթակա չէ վոչ առ ու ծախի, վոչ ել արտելի կողմից վարձու տըրվելու:

Խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեն յուրաքանչյուր արտելի տալիս և պետական մի ակտ՝ հողն անժամկետ ոգտագործելու համար: Այդ ակտում վորոշվում են արտելի ոգտագործած հողի չափն ու ճիշտ սահմանները, ընդվորում այդ հողերի կրճատում չի

թուլատրվում, այլ թուլատրվում և միայն ավերացնել դրանք՝ կամ պետական ֆոնդի ազատ հողերի հաշվին կամ թե մենատնտեսների զբաղեցրած ավելորդ հողերի հաշվին, այն պայմանով, վոր արտելի հողաշերտերի մեջ վոչ մի այլ հողաշերտ չմտնի:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսութիւնն անձնական ոգտագործման համար հանրաշնացված հողերից հատկացվում և վորքը հողակտոր, վորպես տնամերձ հողամաս (բանջարանոց, պարտեզ):

Կոլտնտեսականի տնտեսութիւնն կողմից անձնապես ոգտագործած տնամերձ հողամասի չափը (չհաշված բնակելի շենքերի բռնած հողը) կարող և լինել մի քառորդ հեկտարից մինչև կես հեկտար, իսկ առանձին շրջաններում նաև մինչև մեկ հեկտար, նաչած մարդային ու շրջանային պայմաններին, վորոնք սահմանում են դաշնակից հանրապետութիւնների հողօրդկոմատները՝ ԽՍՀՄ Հողօրդկոմատի ցուցումների հիման վրա:

3. Արտելի միասնական հողային մասսիվը վոչ մի դեպքում չպետք և պակասի: Արգելվում և արտելից դուրս չեկած անդամների հող հատկացնել ի հաշիվ արտելի հողային տարածութիւնն: Արտելից դուրս չեկողները կարող են հող ստանալ միմիայն պետական հողային ֆոնդի ազատ հողերից:

Արտելի հողերը բաժանվում են դաշտերի՝ հաստատված ցանքաշրջանառութիւնն համաձայն: Յանքաշրջանառութիւնն դաշտերում դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին մշտական հողամաս և ամրացվում ցանքաշրջանառութիւնն ամբողջ ժամանակաշրջանի համար:

Անասնապահական խոշոր ֆերմաներ ունեցող կոլտնտեսութիւններում անհրաժեշտութիւնն դեպքում բավականաչափ հող լինելիս կարելի չէ առանձնացնել վորոշ հողամասեր, վորոնք ամրացվում են ֆերմային և ոգտագործվում են ֆերմայի անասունների համար կերարույսեր ցանելու նպատակով:

## ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. Հանրայնացվում են՝ բոլոր բանող անասունները, գյուղատնտեսական ինվենտարը (գութանը, շաբաքացանը, փոցլը, կալսիչը, հնձիչը), սերմացվի պաշարները, կերի միջոցները՝ հանրայնացված անասունները պահպանելու համար անհրաժեշտ քանակությամբ, արտելային տնտեսությունը վարելու համար անհրաժեշտ տնտեսական շենքերը և գյուղատնտեսության մթերքները վերամշակող բոլոր ձեռնարկությունները:

Չեն հանրայնացվում և մնում են կոլտնտեսականի տնտեսության անձնական ոգտագործման համար՝ բնակելի շենքերը, նրա անձնական անասուններն ու թռչունները և կոլտնտեսականի տնտեսության անձնական ոգտագործման անասունների պահպանության համար անհրաժեշտ տնտեսական շենքերը:

Գյուղատնտեսական ինվենտարը հանրայնացնելիս, արտելի անդամներին մնում է անձնապես ոգտագործելու համար գյուղատնտեսական այն մանր ինվենտարը, վորն անհրաժեշտ է տնամերձ հողամասում կատարվելիք աշխատանքի համար:

Արտելի վարչությունն անհրաժեշտ դեպքում հանրայնացված բանող անասուններից առանձնացնում է մի քանի ձի՝ արտելի անդամների անձնական կարիքները վճարով սպասարկելու համար:

Արտելը կազմակերպում է խոռն անասնապահական ապրանքային ֆերմա, կամ մեծ քանակությամբ անասուններ լինելու դեպքում՝ մի քանի մասնագիտացված անասնապահական ապրանքային ֆերմաներ:

5. Հացահատիկային, բամբակացան, ճակնդեղացան, վուշացան, կանեփացան, կարտոֆիլացան-բանջարաբուծական, թեյաբուծական ու ծխախոտագործական շրջաններում յուրաքանչյուր կոլտնտեսա-

կանի տնտեսությունը կարող է անձնական ոգտագործման համար ունենալ մի կով, մինչև չերկու գլուխ չեղջյուրավոր անասունի մատղաշ, մի մայր խոզ իր ձագերով, կամ չեթե կոլտնտեսության վարչությունն անհրաժեշտ դոնի, չերկու մայր խոզ իրենց ձագերով, մինչև 10 վոչխար ու այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուն ու ձագար և մինչև 20 փեթակ:

Չարգացած անասնապահություն ունեցող հողագործական շրջաններում յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսությունը կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 2—3 կով և բացի դրանից մատղաշներ, 2-ից մինչև 3 մայր խոզ իրենց ձագերով, 20—25 վոչխար ու այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուն ու ձագար և մինչև 20 փեթակ: Այդ շրջանների թվին են պատկանում որինակ՝ Ղազախստանի քոչվորային շրջաններին վոչ սահմանակից հողագործական շրջանները, Բելոռուսիայի անտառային շրջանները, Ուկրաինայի՝ Չերնիգովի ու Կիևի մարզերի անտառային շրջանները, Արևմտյան Սիբիրի չերկրի Բարաբինսկ տափաստանի շրջանները և Մերձ-Ալթայյան շրջանները, Ոմսկի մարզի շրջանների Իշիմի ու Տոբոլսկի խմբերը, Բաշկիրիայի լեռնային մասը, Արևելյան Սիբիրի արևելյան մասը, Հեռավոր-Արևելյան չերկրի հողագործական շրջանները, Հյուսիսային չերկրի շրջանների Վոլոգդայի և Խոլմոգորյան խմբերը:

Վոչ քոչվոր ու կիսաքոչվոր անասնապահության շրջաններում, վորտեղ հողագործությունը փոքր նշանակություն ունի, իսկ անասնապահությունը վճռական դեր է խաղում տնտեսության մեջ, յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսությունը կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 4-ից մինչև 5 կով և բացի դրանից մատղաշներ, 30-ից մինչև 40 վոչխար ու այծ միասին, 2—3 մայր խոզ իրենց ձագերով, անսահմանափակ քանակությամբ թռչուն, ձագար, մինչև 20 փեթակ, ինչպես և մի ձի, կամ կուժիս ավոդ մի դամբիկ, կամ չերկու ուղտ, կամ չերկու եշ, կամ չերկու շորի: Այդ շրջանների թվին են պատկանում որինակ՝ Ղա-

գախստանի քոչվոր շրջաններին սահմանակից Ղաղախստանի անասնապահական շրջանները, Թուրքմենիայի, Տաջիկստանի, Ղարախալպակի և Կիրգիզիայի անասնապահական շրջանները, Ուրոթյան, Խակասսյան, Բուրիաթո-Մոնղոլիայի արևմտյան մասը, Կալմիկների ինքնավար մարզը, Հյուսիսային Կովկասի—Դաղստանի ինքնավար Սիչ-ի, Չեչենա-Ինգուշիայի, Կարարդինո-Բալխարիայի, Կարաչայի և Ոսեթիյայի ինքնավար մարզերի լեռնային շրջանները, ինչպես և Ադրբեյջանի, Հայաստանի ու Վրաստանի լեռնային շրջանները:

Քոչվոր անասնապահության շրջաններում, վորտեղ հողագործությունը համարյա վոչ մի նշանակություն չունի, իսկ անասնապահությունը հանդիսանում է տնտեսության համապարփակ ձևը, յուրաքանչյուր կոլտնտեսական տնտեսություն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 8—10 կով և բացի դրանից մատղաշներ, 100—150 վոչխար և այժ միասին, անասնամանափակ քանակությունը թույլուն, մինչև 10 ձի, 5—8 ուղտ: Այդ շրջանների թվին են պատկանում, որինակ՝ Ղաղախստանի քոչվորական շրջանները, Նազայայի շրջանը, Բուրիաթո-Մոնղոլիայի քոչվորական շրջանները:

## 4

### ԱՐՏԵԼԻ ՅԵՎ ՆՐԱ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

6. Արտելը պարտավորվում է իր կոլեկտիվ տնտեսությունը վարել պլանով, ճշտիվ կատարելով բանվորա-գյուղացիական կառավարության որդանների սահմանած գյուղատնտեսական արտադրության պլանները և արտելի պարտավորությունները պետության հանդեպ:

Արտելն ընդունում է ճշտորեն կատարելու համար ցանքի, ցելի, շարամեջ մշակման, բերքահավաքի, կալսելու և աշնանավարի պլանները, վորոնք կազմվում են կոլտնտեսությունների գրությունն

ու առանձնահատկությունները հաշվի առնելով,—ինչպես և անասնապահության զարգացման պետական պլանը:

Արտելի վարչությունը և բոլոր անդամները պարտավորվում են.—

ա) բարձրացնել կոլտնտեսային դաշտերի բերքատվությունը՝ մտցնելով և պահպանելով կանոնավոր ցանքաշրջանառություն, խորը հերկ, վոչնչացնելով մոլախոտերը, ընդարձակելով ու լավ մշակելով ցելերն ու աշնանավարը, ժամանակին ու խնամքով կատարելով տեխնիկական բույսերի շարամեջ մշակումը, ժամանակին բուկ տալով բամբակը, պարարտացնելով հողը՝ թե անասնապահական ապրանքային ֆերմաների և թե կոլտնտեսական տնտեսության գոմաղբով, հանքային պարարտանյութերով, պալքար մղելով գյուղատնտեսական ֆուսատուների դեմ, ժամանակին ու խնամքով հավաքելով բերքն առանց կորստի, պահպանելով ու մաքրելով վոռոգիչ կառուցումները, պահպանելով անտառները, տնկելով դաշտերը պահպանող անտառաշերտեր, խստիվ պահպանելով տեղական հողային որդանների սահմանած ազրոտեխնիկական կանոնները:

բ) ցանքի համար ընտրել լավագույն սերմեր, մաքրել դրանք ամեն տեսակի աղբից, պահպանել հափշտակումից ու փշացումից, պահել դրանք մաքուր ոգափոխվող շենքերում, ընդարձակել տեսակավոր սերմացվի ցանքերը:

գ) ընդարձակել ցանքերի տարածությունը՝ ոգտագործելով արտելի տնորինության տակ գտնված ամբողջ հողը, բարելավելով և մշակելով բարձիթող արված հողերը, հերկելով խոպան հողերը և կիրառելով ներկոլտնտեսային հողաշինարարությունը:

դ) հանրային հիմունքներով լրիվ ոգտագործել արտելին պատկանող ամբողջ քաշող ուժը, ամբողջ ինվենտարը, գյուղատնտեսական գործիքները, սերմացուն և արտադրության մյուս միջոցները, ինչպես և այն բոլոր տրակտորները, շարժիչները, կալսիչները, կոմբայնները և մյուս մեքենաները, վոր բանվորա-գյուղացիական պետությունը մեքենատրակտորային կայանների միջոցով վորպես

ուգնութիւնն տալիս և կոլտնտեսութիւններին, կազմակերպել հան-  
րայնացված կենդանի ու մեռյալ ինվենտարի ճիշտ խնամքը, աշ-  
խատելով, վոր կոլեկտիվ տնտեսութեան մեջ անասուններն ու ին-  
վենտարը լավ դրութեան մեջ լինեն:

յե) կազմակերպել անասնապահական ֆերմաներ, իսկ վորտեղ  
հնարավոր է՝ նաև ձիաբուծական ֆերմաներ, ավելացնել անասուն-  
ների թիվը և բարելավել անասունների ցեղն ու մթերատուութիւ-  
նը ֆերմաներում, արտելային արտադրութեան մեջ ազնւորեն աշ-  
խատող անդամներին ոգնութիւնն ցուցց տալ՝ կով և մանր անա-  
սուն ձեռք բերելու գործում, ցեղական բարելավված արտադրող-  
ներով սպասարկել վոչ միայն ֆերմաների անասուններին, այլև  
արտելի անդամների կողմից անձնապես ոգտագործվող անասուննե-  
րին, պահպանել սահմանված զոտտեխնիկական և անասնաբուժա-  
կան կանոնները:

զ) ընդարձակել կերաբուծիչների արտադրութիւնը, բարելավել  
մարգագետիններն ու արոտավայրերը, ոգնութիւնն ցուցց տալ հան-  
րային արտադրութեան մեջ բարեխղճորեն աշխատող արտելի ան-  
դամներին, ապահովելով նրանց համար, վորտեղ այդ հնարավոր է՝  
կոլտնտեսային արոտավայրերից ոգտովելը, ինչպես և ըստ հնարա-  
վորութեան կեր տալով՝ նրանց անձնական ոգտագործման անա-  
սունների համար ի հաշիվ աշխորերի:

ե) զարգացնել գյուղատնտեսական արտադրութեան մյուս բո-  
լոր ճյուղերը՝ համաձայն տեղի բնական պայմանների, և տնայնա-  
գործական զբաղմունքները՝ համաձայն շրջանի պայմանների, պահ-  
պանել ու մաքրել գոյութիւնն ունեցող լճակները, կառուցել նորե-  
րը և զարգացնել նրանց մեջ ձկնատնտեսութիւնն:

ը) կազմակերպել տնտեսական ու հանրային շենքերի շինարա-  
րութիւնը հանրային հիմունքներով:

թ) բարձրացնել արտելի անդամների աշխատանքային վորա-  
կավորումը, ոժանդակել կոլտնտեսականներին՝ նրանցից բրիգա-  
դիներ, տրակտորավարներ, կոմբայնավարներ, շոֆերներ, անապ-  
նաբուժակներ ու սանիտարներ, ձիապահներ, խոզապահներ:

անասնապահներ, հովիվներ, նախրապահներ, խրճիթ-լաբորատո-  
րիաների աշխատողներ պատրաստելու գործում:

ժ) բարձրացնել արտելի անդամների կուլտուրական մակարդա-  
կը, արմատացնել թերթը, գիրքը, ռադիոն, կինոն, ստեղծել  
ակումբներ, գրադարաններ և ընթերցարաններ, ունենալ բաղնիք-  
ներ, վարսավերանոցներ, սարքավորել լուսավոր ու մաքուր կա-  
յաններ դաշտում, կարգի բերել գյուղի փողոցները, փողոցներում  
տնկել զանազան, առանձնապես պտղատու ծառեր, աջակցել կոլ-  
տնտեսականներին՝ բարելավելու և զարգարելու իրենց բնակա-  
րանները:

ժա) ներգրավել կանանց կոլտնտեսային արտադրութեան և  
արտելի հասարակական կյանքի մեջ, ընդունակ և փորձված կոլ-  
տնտեսուհիներին առաջ քաշելով ղեկավար աշխատանքի, ըստ  
հնարավորութեան թեթևացնելով նրանց տնային աշխատանքը՝  
մսուրներ, մանկական հրապարակներ և այլն ստեղծելու միջոցով:

## 5

### ՄԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

7. Արտելի անդամի ընդունելութիւնը կատարում է ընդհա-  
նուր ժողովը, վորը հաստատում է վարչութեան կողմից մտցված  
նոր անդամների ցուցակները:

Արտելի անդամ կարող են դառնալ բոլոր աշխատավորները՝  
16 տարեկանից սկսած, ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ:

Արտելի մեջ չեն ընդունվում կուլակները և ընտրական իրա-  
վունքներից զրկված բոլոր անձինք:

Մասնորոշում.— Այս կանոնից թուլատրվում է բացառու-  
թիւնն անել՝

ա) ձայնագուրկների այն դավակներ Վերաբերմամբ, վորոնք  
մի շարք տարիների ընթացքում զբաղված են հանրագուտ աշխա-  
տանքով և աշխատում են բարեխղճորեն:

բ) նախկին այն կուլակների և նրանց ընտանիքի անդամների վերաբերմամբ, վորոնք արտաքսված լինելով հակախորհրդային և հակակոլտընտեսային յեղույթների համար, իրենց նոր բնակավայրում յերեք տարվա ընթացքում իրենց ազնիվ աշխատանքով և խորհրդային իշխանության ձեռնարկումներին ոժանդակելով ցույց են տվել, վոր իրենք ուղղվել են:

Այն մենատնտես գյուղացիները, վորոնք արտել մտնելուց առաջ յերկու տարվա ընթացքում վաճառել են իրենց ձիերը և սերմացու շունեն, արտել են ընդունվում այն պայմանով, վոր պարտավորվեն իրենց յեկամուտներից մինչև վեց տարի ժամանակամիջոցում մաս-մաս մուծել ձիու արժեքը և սերմացուն՝ բնամթերքով:

8. Անդամների վտարումն արտելից կարող է կատարվել մի-միայն արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ, վորին ներկա յե արտելի անդամների ընդհանուր թվի առնվազն  $\frac{2}{3}$  մասը: Արտելի անդամների ընդհանուր ժողովի արձանագրության մեջ անպայման մատնանշվում է ժողովին ներկա գտնվող կոլտնտեսականների թիվը և վտարելու համար քվե տվողների թիվը:

Այն դեպքում, յերբ արտելի անդամը խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեին բողոքում է իր վտարման դեմ, հարցը վերջնականապես լուծում է խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեի նախագահութունը՝ արտելի վարչության նախագահի և բողոքատվի ներկայութիամբ:

## 6

### ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՅՆԵՐԸ

9. Արտել մանողները պետք է մուծեն մուտքի վճար դրամով 20—40 ուղբլի յուրաքանչյուր տնտեսության համար, նայած նրանց տնտեսության կարողութանը: Մուտքի վճարները մտցվում են արտելի անբաժանելի ֆոնդի մեջ:

10. Արտելի անդամների հանրայնացված գույքի արժեքի (բանող անասուններ, ինվենտար, տնտեսական շենքեր և այլն) մի քառորդից մինչև կեսը հատկացվում է արտելի անբաժանելի ֆոնդին, ըստ վորում անբաժանելի կապիտալին արվող հատկացման ավելի բարձր տոկոս է կիրառվում ավելի ուժեղ տնտեսութունների նկատմամբ: Գույքի մնացած մասը մտցվում է արտելի անդամի փայավճարի մեջ:

Վարչութունն արտելի կազմից դուրս յեկող անդամների հաշիվները մաքրում և նրանց փայավճարը վերադարձնում է դրամով, ընդվորում արտելից դուրս յեկողին կարող է հողաբաժին տրվել միմիայն արտելի հողային տարածության սահմաններից դուրս: Հաշվետեսը, վորպես կանոն կատարվում է տնտեսական տարին վերջանալուց հետո:

11. Արտելն իր ստացած բերքից և անասնապահության մթերքներից՝

ա) կատարում է պետության հանդեպ մթերք հանձնելու և սերմվարկերը վերադարձնելու իր ունեցած պարտավորութունները, մեքենատրակտորային կայանին բնամթերքով վճարում է մեքենատրակտորային կայանի կատարած աշխատանքի համար որենքի ուժ ունեցող կնքված պայմանագրի համաձայն, կատարում է կոնտրակտացիայի պայմանագրերը:

բ) սերմացու յե առանձնացնում ցանքի համար և կեր՝ անասուններին կերակրելու համար ամբողջ տարվա պահանջի չափով, ինչպես և անբերրիութունից ու կերի պակասութունից ապահովելու համար ստեղծում է անձեռնմխելի, տարեցտարի վերականգնվող սերմի ու կերի ֆոնդ՝ տարեկան պահանջի 10—15<sup>0</sup>/<sub>0</sub>-ի չափով:

գ) ընդհանուր ժողովի վորոշմամբ հատուկ ֆոնդ է ստեղծում հաշմանդամներին, ծերերին, ժամանակավորապես իրենց աշխատունակութունը կորցրածներին, կարմիր բանակայինների կարիքավոր ընտանիքներին, մանկամսուրներին ոգնելու և վորբերի պահպանման համար—այս բոլորը պիտի կազմի ընդհանուր արտադրանքի յերկու տոկոսից վոշ ավելին:

դ) արտելի անդամների ընդհանուր ժողովի վերջած չափով հատկացնում է միջերջների մի մասը՝ պետութայանը կամ շուկայում վաճառելու համար:

յե) արտելի բերքի և նրա անասնապահության միջերջների մնացած ամբողջ մասն արտելը բաշխում է իր անդամների մեջ՝ ըստ աշխուրների:

**12. Արտելն իր ստացած դրամական լեկամուտներից՝**

ա) պետութայանը տալիս է որենքով սահմանված հարկերը և ապահովագրական վճարումներ և կատարում:

բ) անհրաժեշտ ծախսեր և անում արտադրական ընթացիկ կարիքների համար, այն է՝ գյուղատնտեսական գործիքների ընթացիկ նորոգումը, անասունների բուժումը, պայքար ֆլասատունների դեմ և այլն:

գ) հոգում է արտելի վարչատնտեսական ծախսերը, այդ նպատակով հատկացնելով փողային լեկամուտների լեռկու տոկոսից վոչ ավելին:

դ) միջոցներ է հատկացնում կուլտուրական կարիքներին, այն է՝ բրիգադիներ և այլ կազմեր պատրաստելու, մսուրներ կազմակերպելու, ռազիո դներու և այլն:

յե) լրացնում է արտելի անբաժանելի ֆոնդը՝ գյուղատնտեսական գործիքներ և անասուններ դներու, շինանյութերի արժեքը վճարելու և դրսից շինարարութայանը ներգրավվող բանվորների հետ հաշիվ տեսնելու համար, գյուղատնտեսական բանկին լեռկարատե վարկերի հերթական վճարները մուծելու համար, ընդ վորում հոգուտ անբաժանելի ֆոնդի հատկացումներ ու լրացումներ են կատարվում արտելի դրամական լեկամուտների 10 տոկոսից մինչև վոչ ավելի քան 20 տոկոսի չափով:

զ) արտելի դրամական լեկամուտների մնացած ամբողջ գումարն արտելը բաշխում է իր անդամների միջև, ըստ աշխուրների:

Ստացված բոլոր մուտքերն անպայման գրանցվում են արտելի մուտքի մատյաններում՝ հենց ստացվելու օրը:

111 - 15479

Արտելի վարչութունը կազմում է թե լեկամուտների մուտքի և թե ծախսի միջոցների տարեկան նախահաշիվ, վորն ուժի մեջ է մտնում միմիայն արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո:

Վարչութունը միջոցներ կարող է ծախսել միմիայն այն հոգվածների համաձայն, վորոնք նախատեսված են նախահաշիվով: Վարչութայանը չի թույլատրվում միջոցներն ինքնակամ կերպով փոխադրել ծախսի նախահաշիվի մի հոգվածից մյուսը և միջոցները մի հոգվածից մյուսը փոխադրելու համար վարչութունը պարտավոր է ստանալ ընդհանուր ժողովի թույլատրվությունը:

Արտելն իր ազատ միջոցները պահում է բանկում՝ իր ընթացիկ հաշվում կամ խնայողական դրամաըկղում: Միջոցներն ընթացիկ հաշվից դուրս են դրվում միմիայն արտելի վարչութայան հրամանով, վորը վավերական է արտելի նախագահի ու հաշվապահի ստորագրությամբ:

**7**

**ԱՇԽԱՏԱՆԲԻ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒՄԸ, ՎԱՐՁԱՏՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ**

**13.** Արտելի տնտեսութայան բոլոր աշխատանքները կատարվում են նրա անդամների անձնական աշխատանքով համաձայն ընդհանուր ժողովի ընդունած ներքին կարգի կանոնների: Գյուղատնտեսական աշխատանքների համար վարձով թույլատրվում է ոգտագործել միմիայն այն անձանց, վորոնք ունեն մասնագիտական գիտելիքներ և պատրաստութուն (ագրոնոմներ, ինժեներներ, տեխնիկներ և այլն):

Թույլատրվում է ժամանակավոր բանվորներ վարձել միմիայն բացառիկ դեպքերում, լեբը շտապ աշխատանքները հնարավոր չե կատարել պահանջված ժամկետին արտելի անդամների առկա ուժերով:



նրանց լիակատար ծանրաբեռնութեան դեպքում, ինչպես և շինարարական աշխատանքների համար:

**14.** Վարչութիւնն արտելի անդամներից ստեղծում է արտադրական բրիգադներ:

Դաշտավարական բրիգադներ են կազմվում առնվազը լիակատար ցանքաշրջանառութեան ժամանակի համար:

Դաշտավարական բրիգադին հողամասեր են հատկացվում ցանքաշրջանառութեան դաշտերում ցանքաշրջանառութեան ժամանակաշրջանի համար:

Դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին կոլտնտեսութեան վարչութիւնը հատուկ արձանագրութեամբ ամրացնում է նրան անհրաժեշտ ամբողջ ինվենտարը, բանոց անասունները և տնտեսական շենքերը:

Անասնապահական բրիգադները կազմվում են առնվազն յերեք տարի ժամանակով:

Արտելի վարչութիւնն անասնապահական բրիգադին ամրացնում է միջերատու անասունները, սպասարկման համար անհրաժեշտ ինվենտարը, քաշող ուժը և անասնապահական շենքերը:

Արտելի անդամների մեջ աշխատանքը բաշխում է անմիջակա՛նորեն բրիգադիքը, վորը պարտավոր է լավագույն ձևով ոգտագործել իր բրիգադի յուրաքանչյուր կոլտնտեսականի, թույլ չտալով վոչ մի խնամիութիւն և ընտանեկանութիւն՝ աշխատանքը բաշխելիս, խստիվ հաշվի առնելով ամեն մեկի աշխատանքային վորակավորումը, փորձն ու Ֆիզիկական ուժը, իսկ հղի կանանց և կերակրող մայրերի նկատմամբ նրանց աշխատանքը թեթևացնելու անհրաժեշտութիւնը, ազատելով նրանց աշխատանքից ծննդաբերութիւնից մի ամիս առաջ և ծննդաբերութիւնից մի ամիս հետո, պահպանելով ալդ յերկու ամսվա համար նրանց հասանելիքը՝ նրանց աշխորերի միջին վաստակի կեսի չափով:

**15.** Գյուղատնտեսական աշխատանքները կատարվում են գործավարձի հիման վրա:

Արտելի վարչութիւնը մշակում է և կոլտնտեսականների ընդհանուր ժողովը հաստատում բոլոր գյուղատնտեսական աշխատանքների պլանը, արտադրանքի նորմաները և յուրաքանչյուր աշխատանքի գնահատումներն աշխորերով:

Յուրաքանչյուր աշխատանքի համար սահմանվում են բարելւրդճորեն աշխատող կոլտնտեսականին մատչելի արտադրանքի նորմաներ, հաշվի առնելով բանոց անասունների, մեքենաների ու հողի դրութիւնը: Յուրաքանչյուր աշխատանք, որինակ՝ մի հեկտարի վարը, մի հեկտարի ցանքը, մի հեկտար բամբակի բուկ տալը, մի տոնն հացահատիկի կախումը, մի ցենտներ ճակնդեղի հանումը, մի հեկտար վուշի գգելը, մի հեկտար վուշի թրջոցը, մի լիտր կաթ կլթելը և այլն, գնահատվում է աշխորերով՝ նայած աշխատողից պահանջված վորակավորմանը, աշխատանքի բարդութիւնը, դժվարութիւնը և արտելի համար ունեցած կարևորութիւնը: Բրիգադիքն առնվազը շաբաթը մեկ անգամ հաշվում է արտելի յուրաքանչյուր անգամի կատարած ամբողջ աշխատանքը և սահմանված գնահատումների համաձայն կոլտնտեսականի աշխատանքային գրքուցիւմ գրանցում է նրա վաստակած աշխորերի քանակը:

Արտելի վարչութիւնն ամիսը մեկ անգամ կախում է արտելի անդամների ցուցակը, մատնանշելով նախորդ ամսում նրանց վաստակած աշխորերի քանակը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի տարեկան արդյունքը և լեկամուտը, բացի հաշվապահից, անպայման հաստատվում է բրիգադիքի և արտելի նախագահի կողմից: Արտելի յուրաքանչյուր անդամի վաստակած աշխորերի ցուցակը կախվում է ի գիտութիւն բոլորի՝ արտելի լեկամուտների բաշխումը հաստատող ընդհանուր ժողովից ամենաուշը լերկու շաբաթ առաջ:

Յեթե դաշտավարական բրիգադը, լավ աշխատանքի շնորհիվ իրեն ամրացված հողամասից ստանում է միջին կոլտնտեսայինից բարձր բերք, կամ անասնապահական բրիգադը լավ աշխատանքի շնորհիվ ապահովում է կովերի ավելի բարձր կաթնատվութիւնը, անասունների ավելի գիրութիւնը և մտողաշների լիակատար պահ-

պանուճը, ապա արտելի վարչութիւնն այդպիսի բրիգադի բոլոր անդամները լեկամուտի վրա հավելուներ ե անուճ նրանց վաստակած աշխօրերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով, բրիգադի աչքի ընկնող հարվածայիններին՝ մինչև 15 տոկոսի չափով, իսկ բրիգադիներն և Փերմայի վարիչին՝ մինչև 20 տոկոսի չափով:

Յեթե դաշտավարական բրիգադը վատ աշխատանքի պատճառով իրեն ամրացված հողամասերից հավաքում ե միջին կոլտնտեսայինից ցածր բերք, կամ անասնապահական բրիգադն իր վատ աշխատանքի պատճառով տալիս ե միջակից ցածր կաթնատուութիւն, անասունների զիրութիւն և մատղաշի պահպանում, ապա արտելի վարչութիւնն այդպիսի բրիգադի բոլոր անդամների լեկամուտներից պահումներ ե կատարում՝ նրանց վաստակած աշխօրերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով:

Արտելի լեկամուտների բաշխումն անդամների միջև կատարվում ե բացառապէս արտելի յուրաքանչյուր անդամի վաստակած աշխօրերի քանակի համաձայն:

**16.** Տարվա ընթացքում արտելի անդամին կարելի լե դրամական ավանս տալ վոչ ավելի, քան աշխատանքի համար նրան հասնող գումարի 50 տոկոսի չափով:

Վարչութիւնն արտելի անդամներին բնամթերքով ավանս ե տալիս հացահատիկը կալսելու սկզբից՝ կոլտնտեսութիւնն ներքին կարիքների համար հատկացվող 10—15 տոկոս կալսված հացահատիկից:

Տեխնիկական մշակութիւնների ցանքով զբաղվող արտելում արտելի անդամին դրամական լեկամուտը վճարվում ե առանց սպասելու, վոր վերջանա բամբակի, վուշի, կանեփի, ճակնդեղի թելի, ծխախոտի հանձնումը պետութիւնը, այլ հանձնելուն զուգընթաց, առնվազն շաբաթը մեկ անգամ՝ հանձնված արտադրանքի համար արտելի ստացած դրամի 60 տոկոսի չափով:

**17.** Արտելի բոլոր անդամները պարտավորվում են խստիվ

պահպանել իրենց կոլտնտեսային սեփականութիւնը և կոլտնտեսային դաշտերում աշխատող պետական մեքենաները, աշխատել ազնվօրեն, լենթարկվել կանոնադրութիւնն պահանջներին և ընդհանուր ժողովի ու վարչութիւնն վորոշումներին, պահպանել ներքին կարգի կանոնները, ճշտիվ կատարել վարչութիւնն և բրիգադիների կողմից նրանց հանձնարարված աշխատանքը և հասարակական պարտականութիւնները, խստիվ պահպանել աշխատանքի կարգապահութիւնը:

Հանրային գույքին անտնտեսօրեն ու անօրսացավ վերաբերվելու համար, առանց հարգելի պատճառների աշխատանքի դուրս չգալու, վատօրակ աշխատանքի և աշխատանքային կարգապահութիւնն ու կանոնադրութիւնն այլ խախտումներ կատարելու համար, վարչութիւնը մեղավորներին տույժի լե լենթարկում ներքին կարգի կանոնների համաձայն. որինակ՝ կրկին կատարել տալ վատօրակ կատարված աշխատանքն առանց աշխօրերը հաշվելու, նախագգուշացում, հանդիմանութիւնն անել, պարսավանքի լենթարկել ընդհանուր ժողովում, բարձրացնել սե տախտակի, տուգանել մինչև հինգ աշխօրի չափով, փոխադրել ցածր աշխատանքի, ժամանակավորապէս հեռացնել աշխատանքից:

Այն դեպքերում, լերը դաստիարակելու և պատժելու համար արտելի ձեռք առած բոլոր միջոցները չեն ներգործում, վարչութիւնն ընդհանուր ժողովում գնում ե արտելի անուղղելի անդամներին արտելից վտարելու հարցը:

Վտարումը կատարվում ե գյուղատնտեսական արտելի կանոնադրութիւնն 8-րդ կետում սահմանված կարգով:

**18.** Հանրային կոլտնտեսային և պետական սեփականութիւնն ամեն մի հափշտակում, դեպի արտելի գույքն ու անասունները և մեքենատրակտորային կաշանների մեքենաները ցուց տրվող ամեն մի վնասարարական վերաբերմունք արտելը դիտում ե վորպէս դավաճանութիւն՝ կոլտնտեսութիւնն ընդհանուր գործին և ողնութիւնն՝ ժողովրդի թշնամիներին:

Կորսնատեսային կարգերի հիմունքներն այգպես հանցավոր կերպով խախտելու համար մեղավոր անձինք, արտելի կողմից դատի չեն արվում՝ բանվորագյուղացիական պետության որևէ քննչի ամբողջ խստությամբ նրանց պատժելու համար:

## 8

### ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19. Արտելի գործերը կառավարում է արտելի անդամների ընդհանուր ժողովը, իսկ ժողովների միջև ընկած ժամանակամիջոցում՝ ընդհանուր ժողովի ընտրած վարչութիւնը:

20. Ընդհանուր ժողովն արտելի կառավարման բարձրագույն օրգանն է:

Ընդհանուր ժողովը՝

ա) ընտրում է արտելի նախագահ և արտելի վարչութիւն, ինչպես և արտելի վերստուգիչ հանձնաժողով, ընդ վորում վերստուգիչ հանձնաժողովը հաստատվում է խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեյի կողմից:

բ) կատարում է նոր անդամների ընդունելութիւնը և անդամների վտարումն արտելի կողմից:

գ) հաստատում է տարեկան արտադրական պլանը, մուտքի ու չեղքի նախահաշիվը, շինարարութիւն պլանը, արտադրանքի նորմաները և աշխատանքի գնահատումն աշխուրհերով:

դ) հաստատում է մեքենատրակտորային կայանի հետ կնքվող պայմանագիրը:

ե) հաստատում է վարչութիւն տարեկան հաշվետվութիւնը՝ վերստուգիչ հանձնաժողովի պարտադիր չեղրակացութիւն հետ միասին, ինչպես և վարչութիւն հաշվետվութիւնները գյուղատընտեսական կարեորագույն կամպանիաների վերաբերմամբ:

զ) հաստատում է գանազան ֆոնդերի չափը և աշխուրհերի համար տրվելիք մթերքի ու դրամի քանակը:

ե) հաստատում է արտելի ներքին կարգի կանոնները:

Կանոնադրութիւն այս կետում թվարկված բոլոր հարցերի վերաբերմամբ արտելի վարչութիւն ընդունած վորոշումներն անվճար են առանց ընդհանուր ժողովի հաստատման:

Ընդհանուր ժողովն արտելի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը ներկա լինելու դեպքում որինական է՝ բոլոր հարցերը լուծելու համար, բացի արտելի վարչութիւն ու նախագահի ընտրութիւն հարցից, արտելի կազմից վտարելու հարցից և գանազան ֆոնդերի չափին վերաբերող հարցից, վորոնք վորոշելու համար անհրաժեշտ է, վոր ընդհանուր ժողովում ներկա լինի անդամների ընդհանուր թվի առնվազն չերկու չերրորդ մասը:

Ընդհանուր ժողովը վորոշումներ է ընդունում ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

21. Արտելի գործերը վարելու համար արտելի անդամների ընդհանուր ժողովը չերկու տարի ժամանակով ընտրում է վարչութիւն 5—9 հոգի կազմով, նախած արտելի մեծութիւնը:

Արտելի վարչութիւնն արտելի գործադիր օրգանն է և արտելի անդամների ընդհանուր ժողովի առաջ պատասխանատու չե արտելի աշխատանքի համար և պետութիւն հանդեպ արտելի պարտավորութիւնների կատարման համար:

22. Արտելի և նրա բրիգադների աշխատանքի ամենորյա գեկավարութիւն, ինչպես և վարչութիւն վորոշումների կատարման ամենորյա ստուգման համար արտելի ընդհանուր ժողովն ընտրում է արտելի նախագահ, վորը միևնույն ժամանակ հանդիսանում է վարչութիւն նախագահը:

Նախագահը պարտավոր է վարչութիւն նիստ գումարել ամսական առնվազն չերկու անգամ՝ ընթացիկ գործերը քնարկելու և համապատասխան վորոշումներ ընդունելու համար:

Վարչութիւնը նախագահին ոգնելու համար վարչութեան անդամներէից ընտրում է նախագահի տեղակալ, նախագահի առաջադրութեամբ:

Նախագահի տեղակալն իր ամբողջ աշխատանքի մեջ չենթարկվում է նախագահի ցուցումներին:

**23.** Անասնապահական ֆերմաների բրիգադիրներին ու վարիչներին նշանակում է արտելի վարչութիւնը՝ առնվազն չերկու տարի ժամանակով:

**24.** Հաշվապահութիւնը վարելու և դուլքի հաշվառումը կատարելու համար, վարչութիւնն արտելի անդամներէից ընտրում կամ վարձով հրավիրում է հաշվապահ: Հաշվապահը վարում է հաշվապահութիւնը և հաշվարկումը սահմանված ձևերով և ամբողջովին չենթարկվում է արտելի վարչութեանն ու նրա նախագահին:

Հաշվապահին վոչ մի իրավունք չի տրվում ինքնակամ անորինել արտելի միջոցները, ավանսներ տալ և ծախսել բնամթերքի ֆոնդերը: Այդ իրավունքները վերապահվում են միմիայն արտելի վարչութեանը և նախագահին: Արտելի ծախսի դրամական փաստաթղթերն ստորագրում են, բացի հաշվապահից, նաև արտելի նախագահը կամ նրա տեղակալը:

**25.** Վերստուգիչ հանձնաժողովն ստուգում է վարչութեան անտեսական—ֆինանսական ամբողջ գործունեութիւնը, ստուգում է՝ թե զրամի ու բնամթերքի մուտքերն արդյոք սահմանված կարգով մուտք արված են արտելում, արդյոք պահպանվել է միջոցները ծախսելու՝ կանոնադրութեամբ նախատեսված կարգը, բավարար հոգատարութեամբ պահպանվում է արդյոք արտելի դուլքը, չկա՞ն արդյոք արտելի դուլքի և դրամական միջոցների հափշտակումներ ու վատնումներ, ինչպե՞ս է կատարում արդյոք արտելն իր պարտավորութիւնները պետութեան հանդեպ, ինչպե՞ս է գանձում իր ստանալիքներն արտելի պարտապաններէից:

Իրա հետ միասին վերստուգիչ հանձնաժողովը մանրագնին

ստուգում է արտելի բոլոր հաշիվներն իր անդամների հետ, լերևան է բերում թերահաշիվի, աշխոբերի վոչ ճիշտ գրանցման, աշխոբերի հաշիվները ժամանակին չտեսնելու ամեն մի դեպք և արտելի ու նրա անդամների շահերի խախտման այլ դեպքերը:

Վերստուգիչ հանձնաժողովը վերստուգում է կատարում տարեկան 4 անգամ: Վերստուգիչ հանձնաժողովը վարչութեան կողմից ընդհանուր ժողովին ներկայացվող տարեկան հաշվետվութեան առթիվ տալիս է իր լեզրակացութիւնը, վորն ընդհանուր ժողովը լսում է վարչութեան հաշվետվութեանից անմիջապես հետո: Վերստուգման արձանագրութիւնը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից:


Վերստուգիչ հանձնաժողովն իր գործունեութեան համար հաշվետու չէ արտելի անդամների ընդհանուր ժողովի առաջ:



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs and is mirrored across the page.







**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	Էջ
1. Նպատակներն ու խնդիրները . . . . .	5
2. Հողի մասին . . . . .	6
3. Արտադրության միջոցների մասին . . . . .	8
4. Արտելի յեվ նրա վարչության գործունեությունը . . . . .	10
5. Անդամության մասին . . . . .	13
6. Արտելի միջոցները . . . . .	14
7. Աշխատանքի կազմակերպումը, վարձատրումն ու կարգապահությունը	17
8. Արտելի գործերի կառավարումը . . . . .	22

*Այս գրքի համար 1922 թ. հունիսի 1-ին  
հաստատվել է հարկային քաղաքականության  
մասին հրահանգի հիման վրա հարկային  
գործունեության և վարչական գործունեության  
1922 թ. հունիսի 1-ին հաստատված 1922 թ. հունիսի 1-ին*

19 APR 2013

u8 1  
9w3

Յերկբարգ հրատարակւթյունը ուղղու-  
մերով խմբագրեց Հ. Մաքջանյանը  
տեխ. խմբագիր՝ Հ. Մաւրադյան

●  
տպված է գյուղհրատի տպարանում, յերկ-  
վանում ■ հազար իննհարյուր յերեսունհինգ  
թվին ■ յերկուսագարր որինակ դվուխիտ-  
կայի վրա ■ սրբագրությունը կատարել են  
վազգեն ալեխյանը յեվ վաչե յաչատրյանը ■  
շարել յեվ եջ ե կապել հրուշ հովհաննիս-  
յան ■ տպագրվել է արբանում բարայանի  
դեկավարությամբ ■ կազմարարական աշ-  
խատանքը կատարել է արմենակ մուսյանը  
Գլավիտ № 161, հրատ. № 238, պատվ. 534

Արտադրողի անունը  
հարցազրույցի  
համարը:



25

ՀՀ Ազգային գրադարան



NL0883451

111  
1577

10077

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՄԻՅ - ՈՒՄ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒ-  
ԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԵԼՈՒ, ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՅԵՎ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՀ ԺՈՂ.ԿՈՄՄՈՐԶԻ ՅԵՎ ՀԱՅԱՍ-  
ՏԱՆԻ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԳՅՈՒՂՂՐԱՏ, ՅԵՐԵՎԱՆ, 1935

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԽՀ-ՈՒՄ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԿԱՆՈ-  
ՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՇԱԿԵԼՈՒ, ԲՆՆԱՐԿԵԼՈՒ  
ՅԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԽՀ-Ի ԺՈՂԿՈՄԽՈՐԶԻ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ(Բ)Կ-Ի  
ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի ՄԽՀ-ի Ժողկոմխորհը և Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմը հանձնարարում են կոլտնտեսություններին՝ կանոնադրությունն ընդունելիս, տեղական պայմանների համաձայն, հետեվյալ ճշգրտումները մտցնել Գյուղատնտեսական արտելի Ուղինակելի կանոնադրության մեջ:

**ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ  
ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՈՆՏՆՏԵՍՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ  
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԶԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հանձնարարել կոլտնտեսություններին՝ յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսության, անձնապես ոգտագործելու համար, սահմանել հետեվյալ չափով սնամերձ հողամաս (բանջարանոց, այգի, չհաշված բնակելի շենքերով բոնրված հողը):

Տեխ. խմբագիր՝ Հ. Մուրադյան  
Սրբագրիչ՝ Թ. Ախայան

Գլավիլիաիլի ազոր 161, պատվեր № 534, հրատ. № 238, ամբաստ 2000

Հանձնված և արտագրության 1935 թ. ոգոտոսի 28-ին

Ստորագրված և տպագրելու 1935 թ. սեպտեմբերի 4-ին

Գյուղերատի ապարան, Յերեան, Նալբանդյան 11

ա) չվոռոգվող հողերում  
0,50 հեկտարից մինչև 0,75 հեկտար՝ Ամասիայի  
ու Գորիսի շրջաններում:

0,25 հեկտարից մինչև 0,50 հեկտար՝ Ապա-  
րանի, Ալլահվերդու, Աշտարակի, Իլիշանի, Բա-  
սարգեշարի, Վաղարշապատի, Վեդու, Իջեվանի,  
Ղամարլուևի, Ղափանի, Կոտայքի, Լենինականի,  
Մարտունու, Նոր-Քայազետի, Ստեփանավանի,  
Սիսիանի և Թալինի շրջաններում:

0,25 հեկտարից մինչև 0,40 հեկտար՝ Ազիզ-  
բեկովի, Արթիկի, Ախտայի, Կիրովականի, Մեղրու,  
Միկոյանի, Հոկտեմբերյան ու Շամշադինի շրջ-  
աններում:

բ) վոռոգելի հողերում

0,25-ից մինչև 0,30 հեկտար, բոլոր շրջան-  
ներում:

Այն կոլտնտեսականների տնտեսություննե-  
րից, վորոնց տնամերձ հողամասերը շրջանի հա-  
մար հաստատված սահմանալին նորմայից ավե-  
լի յեն, այդ սահմանված նորմայից ավելի տնա-  
մերձ հողը կտրվում է:

Այն կոլտնտեսականների տնտեսություննե-  
րին, վորոնց տնամերձ հողամասերը սահման-  
ված ամենացածր չափից պակաս են, կարելի յե  
լրացուցիչ հող հատկացնել, այն կոլտնտեսական-  
ների տնտեսությունից կտրելով, վորոնց տնա-

մերձ հողամասերը սահմանված մեծագույն չա-  
փից ավելի յեն, ի հաշիվ ներկայումս չողտագործ-  
վող տնամերձ հողամասերի, նվազեցնելով մե-  
նատնտեսների տնամերձ հողամասերը 10 տոկոսով՝  
համեմատած կոլտնտեսականների տնամերձ հո-  
ղամասերի հետ, յուրացնելով նոր հողեր, ինչ-  
պես և՛ հողի վերոհիշյալ ռեսուրսները պակասե-  
լու դեպքում՝ կտրելով հանրայնացված հացահա-  
տիկային ցանքերից, բայց վոչ ի հաշիվ այն  
տարածությունների, վորոնք բռնված են տեխ-  
նիկական մշակույթներով և յուրցերնով ու հան-  
րային խաղողի այգիներով:

Այն կոլտնտեսականների տնտեսություննե-  
րի համար, վորոնց տնամերձ հողամասերում կան  
0,20 հեկտարից ավելի այգիներ, թույլ տալ ա-  
վելացնել տնամերձ հողամասերը, բայց վոչ ավե-  
լի, քան մինչև 0,50 հեկտար, ներառյալ և այ-  
գին, վոռոգելի հողերում և 0,75 հեկտար՝ չվո-  
ռոգվող հողերում:

Տնամերձ հողամասերի փաստական ոգտա-  
գործման մեջ, կոլտնտեսությունների կողմից  
ընդունված ու գրանցված կանոնադրության  
համաձայն, փոփոխություններ մտցնել 1935 թ.  
աշնանը:

ՀՈՂԸ ՀԱՎԻՏՅԱՆ ՈՒՏԱԳՈՐԾԵԼՈՒ  
ՊԵՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Հողը հավիտյան ոգտագործման պետական  
ակտերը տալ կոլտնտեսություններին հետեվյալ  
ժամկետներին,— ակտեր, վորոնց մեջ սահման-  
վում են կոլտնտեսությունների ոգտագործվող  
հողի չափն ու ճիշտ սահմանները:

ա) Հոկտեմբերյան, Վաղարշապատի, Ղա-  
մարլուի, Ստեփանավանի, Իջևվանի, Շամշազինի,  
Բասարգեչարի, Գորիսի, Սիսիանի, Դիլիջանի,  
Կիրովականի, Կոտայքի, Լենինականի, Արթիկի,  
Թալինի, Աշտարակի և Վեդու շրջաններում՝ 1935  
թվականի ընթացքում:

բ) Նոր-Բայազետի, Ախտայի, Ապարանի,  
Ամասիայի, Ալանվերդու, Աղիզբեկովի: Ղափանի,  
Մարտունու, Միկոյանի և Մեղրու շրջաններում՝  
1936 թվականի ընթացքում:

Մոբիլիզացիայի լենթարկել (բացի շրջաննե-  
րում մշտական աշխատանքում գտնվող 25 հողա-  
շինարարներից) 50 հողաշինարար, վորոնցից 30-ը  
Հայաստանի Հողժողովմատի սխտեմից և 20  
հողաշինարար հանրապետության զանազան  
հիմնարկներում իրենց կամ այլ մասնագիտու-  
թյամբ աշխատողներից:

Ձափող կոլտնտեսականներ պատրաստելու  
համար, կազմակերպել դասընթացներ՝ հաշված  
առնվազն յերկու չափող մի կոլտնտեսության  
համար:

Հանձնարարել շրջագործկոմներին և ՀԿ(բ)ի  
շրջկոմներին՝ հանրապետության խորհանտեսու-  
թյուններում յերեվան հանել ավելորդ այն հո-  
ղերի չափը, վորոնք չեն կարող ոգտագործել  
խորհանտեսությունները, գրանք կոլտնտեսու-  
թյուններին հանձնելու համար և այդ հարցին  
վերաբերյալ իրենց նկատառումները ներկայաց-  
նել Հայաստանի Ժողկոմխորհին ու ՀԿ(բ)ի Կենտ-  
կոմին վոչ ուշ հուլիսի 15-ից:

Հայաստանի Հողժողովմատին՝ այս առաջարկ-  
ների առթիվ իր յեղրակացությունները տալ  
Ժողկոմխորհին, վորպեսզի տեղական ու շրջա-  
նային նշանակություն ունեցող խորհանտեսու-  
թյունների (տեղական որգանների — կոպերա-  
տիվ կազմակերպությունների, միլիցիայի, գործ-  
կոմների և այլոց սնորհիւնության տակ գտնվող  
խորհանտեսությունների) ավելորդ հողերը կըս-  
րելու հարցը լուծեն շրջագործկոմները և շրջկոմ-  
ները, իսկ հանրապետական նշանակություն ու-  
նեցող խորհանտեսությունների նկատմամբ՝ Հա-  
յաստանի Ժողկոմխորհը և Հայաստանի Կենտ-  
կոմը:

ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱՊԵՍ  
ՈՒՅՍԱԳՈՐԾՎՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ  
ՄԱՍԻՆ

Քյուզատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության 5-րդ կետի համաձայն՝

Վաղարշապատի, Դամարլուի, Հոկտեմբերյան շրջանները և Վեդու շրջանի բամբակացան գյուղերը դասել շրջանների առաջին խումբը, վորտեղ յուրաքանչյուր կոլտնտեսականի անտեսությունն անձնապես ոգտագործելու համար կարող ե ունենալ մի կով կամ եգ գոմեշ, մինչև յերկու զուլիս յեղջյուրավոր անասունի մատղաշ, մի մերուն խոզ՝ իր սերնդով, կամ՝ յեթե կոլտնտեսության վարչությունը անհրաժեշտ համարի, յերկու մերուն խոզ՝ իր սերնդով, մինչև 10 փոջխար և այժ միասին, անսահման թվով թռչուն ու ճագար և մինչև 20 փեթակ:

Թույլ տալ այդ շրջանների կոլտնտեսականների անտեսություններին՝ լրացուցիչ կերպով անձնապես ոգտագործելու համար ունենալ մի ձի կամ մի եգ գոմեշ, կամ յերկու եշ, կամ յերկու ջորի:

Արթիկի շրջանը, Ադիգբեկովի շրջանը, առանց լեռնային անասնաբուծական գյուղերի, Ախտայի շրջանը, Ալլահվերդու շրջանի դաշտավայրային

արտերը քարերից մաքրելու և քարն արտերից պարտադիր կարգով դուրս բերելու բնագավառում. մոխրի պարարտանյութն ոգտագործելու ասպարիզում.

անմշակ թողնված հողերը բարելավելու և մշակելու բնագավառում.

շերամապանությունը, մեղվաբուծությունը և թռչնաբուծությունը զարգացնելու ասպարիզում.

գորգագործությունը, բրուտությունը և շինանյութերի՝ արտագրությունը զարգացնելու ասպարիզում:

\*\*\*

Այն կանոնադրութունը, վորը չի գրանցված խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեի կողմից, համապատասխան ուղղումներ մտցնելու համար հանձնվում ե կրկին քննելու գյուղատնտեսական արտելի անդամների ընդհանուր ժողովին, վորտեղ շրջանային գործադիր կոմիտեի ներկայացուցիչը զեկուցում ե կանոնադրության գրանցումը մերժելու պատճառների մասին:

Հայաստանի Սեշ Ժողովրդական Կոմիտեի  
Խորհրդի նախագահ՝ Ա. ԳՈՒՎՈՅՆ  
Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի  
Բարսուղար՝ Ա. ԽԱՆՉՅԱՆ

